

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Մասին Արձանագրութիւններ թեմական Խորհուրդի Ատենագրութեանց Մէջ

---

1. Որոշուեցաւ Կիրակօրեայ դպրոցներու համար վարիչ մարմին մը կազմել, որուն պատրաստած ծրագիր-կանոնագիրը Սրբազան Հօր կողմէ վաւերացուելէ ետք գործադրութեան յանձնուի:

Յղբիւմ. 18, 1956  
Նիստ Բ.

-----

2. Յանձնախումբի անդամներ նշանակուեցան՝

Տ. Վարդան ԹՀՆՅ. Մկրեան, Տ. Բաբգէն ԹՀՆՅ. Մագսուտեան,  
Տ. Լեւոն ԹՀՆՅ. Առաքելեան, Նուպար Տօրեան եւ Լեւոն Պազալեան

Մարմինը պիտի կոչուի՝ "ԿԻՐԱԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԱՐԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ"  
որ իրաւասու պիտի ըլլայ նաեւ թեմական Խորհուրդին յանձնարարել յարմար թեկնածուներ՝ Կիրակօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէնի պաշտօնին համար:

Յունվ. 18, 1956  
Նիստ Բ.

-----

3. Որոշուեցաւ Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբի անդամակցութեան համար հրաւիրել հետեւեալները՝

Երէցկին Եւզին Մկրեան, Ռոզ Նորեան, Յակոբ Ներսոյեան, Հայկ Տատուրեան, Արա Աւագեան, եւ Տ. Եղիշէ Վրդ. Սիմոնեան, եթէ կարելի է:

Ժողովը թելադրեց Յանձնախումբին՝ պատրաստել ամփոփ ծրագիր-կանոնագիր մը կիրակօրեայ դպրոցներու եւ ուսուցչութեան համար, ինչպէս նաեւ կիրակօրեայ դպրոցի նպատակը պարզաբանող յօդուած մը:

Մարտ 1, 1956  
Նիստ Դ.

-----

4. Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբը հաւաստեց թէ պիտի կազմէ քըրիքըլիմ մը, ծրագիր մը, որուն համաձայն եւ տրուած թելադրութեանց վրայ հիմնուելով՝ պիտի պատրաստուին կիրակօրեայ դպրոցներու դասագիրքերը:

Ժողովը թելադրեց Յանձնախումբին, որ ջանայ շուտով կազմել այդ ծրագիրը եւ ներկայացնել Սրբազան Հօր առ ի վաւերացումն եւ ի գործադրութիւն:

Մարտ 21, 1956  
Նիստ Ե.

-----

5. Սրբազան Հայրը հաղորդեց թէ նախագահած էր Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբի ժողովին, ուր նկատի առնուած է դասգիրքերու պատրաստութեան եղանակը, եւ ուսման ծրագիր մը մշակելու մասին եղած են թելադրութիւններ:

Մայիս 22, 1856  
Նիստ Զ.

6. Տ. Լեւոն Ահնյ. Առաքելեան ժողովիս հաղորդեց թէ Կիրակօրեայ Դպրոց-  
ներու Վարիչ Յանձնախումբը /Կեդրոնական Խորհուրդը/, պատրաստած է  
ծրագիր մը եւ ձեռք բերած է Եպիսկոպոսական Եկեղեցւոյ կիրակօրեայ  
դպրոցին համար գործածելի ընտիր դասագիրք մը, որ պիտի պատշաճեցուի  
Հայց. Եկեղեցւոյ վարդապետական եւ ծիսակատարական բնոյթին: Յանձնա-  
խումբը խորհած է նաեւ Վարիչ-Տնօրէնի մասին եւ առ այդ յանձնարարու-  
թիւն պիտի ընէ Առաջնորդ Սրբազանին: Երբ Թեմական Խորհուրդին ներկա-  
յացուի մշակուած ծրագիրը, պատշաճ պիտի ըլլայ որ Յանձնախումբին տը-  
րամադրուի Թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ դասագիրքերու պատ-  
րաստութեան եւ վարիչ-տնօրէնի համար սահմանուած պիւտճէն:

Յունիս 19, 1956  
Նիստ 8.

-----

7. Տ. Վարդան Ահնյ. Մկրեան ժողովին ներկայացուց Կիրակօրեայ Դպրոցներու  
Վարիչ Յանձնախումբի պատրաստած անգլերէն տեղեկագիրը, որով կը տեղե-  
կացուի թէ ղրկուած 29 հարցարաններուն 27ի պատասխանը եւս ատանալով՝  
Յանձնախումբը, հայթայթուած տեղեկութիւններու տուեալներուն վրայ  
հիմնուած, պատրաստած է ցուցակագրուած տախտակ մը, որ ժողովականնե-  
րուն ցոյց տրուեցաւ: Այդ տախտակին համաձայն, 1955-1956 տարեշրջանին՝  
թեմի 26 կիրակօրեայ դպրոցները կը յաճախեն 1960 աշակերտներ, եւ կը  
դասաւանդեն շուրջ 325 ուսուցիչներ:

Ընթացիկ տարւոյ Մայիսին՝ Յանձնախումբը թեմի հոգեւոր հովիւներուն, կի-  
րակօրեայ դպրոցներու տեսուչներուն եւ ուսուցիչներուն ղրկած է նախնա-  
կան ուսման ծրագիր մը՝ գործածելու դպրոցներուն մէջ մինչեւ որ առաւել  
դասեր պատրաստուին եւ հրատարակուին: Սոյն ուսման ծրագիրը կը յանձնա-  
րարէ տեսուչներուն առ այժմ գործածել Եպիսկոպոսական Եկեղեցւոյ Ֆէլլօ-  
շիփ Սիւրիզ դասագիրքերը՝ ութը տարեկաններուն համար:

Ինը տարեկաններուն համար դասեր ու ցուցմունքներ պատրաստութեան մէջ են  
ըստ ուսման ծրագրին, իսկ 10, 11, 12, 13, 14, 15, 16 տարեկաններու ցուց-  
մունքները ներկայիս կ'պատրաստուին՝ ղրկուելու առ ի գործադրութիւն:

Յանձնախումբը կ'առաջարկէ վերահրատարակել "Ուի Թըրսթ Կատ" դասագիրքը  
2500 օրինակով, երկգոյն, որ պիտի արժէ 1750 տոլար: Յանձնախումբը նաեւ  
թեւադրեցի կը գտնէ այս կարգի երեք-չորս դասագիրքեր հրատարակել ութը  
տարեկան խմբաւորումի աշակերտներուն համար:

Յանձնախումբը, Կիրակօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէնի պաշտօնին համար  
կը յանձնարարէ Տիրացու Յակոբ Ներսոյեանը, որ ունի պատրաստութիւն եւ  
փորձառութիւն, ընդունակութիւն եւ հետաքրքրութիւն գործին վերաբերմամբ:

Յանձնախումբը կը ձգտի իրականացնել հետեւեալ կէտերը.

- ա. Պատրաստել միօրինակ ուսումնական ծրագիր մը թեմի կիրակօրեայ դպ-  
րոցներու մէջ գործածելու համար:
- բ. Գրել եւ հրատարակել դասագիրքեր սոյն ուսումնական ծրագրին համա-  
պատասխան:
- գ. Նշանակել Վարիչ-Տնօրէն մը:

Ժողովը որոշեց ընդունիլ Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբի  
սոյն տեղեկագիրը եւ սկզբունքով ընդունիլ տեղեկագրին յանձնարարութիւն-  
ները:

Ժողովը որոշեց որ Առաջնորդ Սրբազանը պաշտօնագրով մը դիմում կատարէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մօտ՝ կիրակօրեայ դպրոցի դասագիրքերու հրատարակութեան ծախքերը ձեռք բերելու համար: Եթէ Բարեգործականը յանձն չառնէ հոգալ նախատեսուած ծախքը, այն ատեն Թեմական Խորհուրդը ջանայ իր միջոցներով հայթայթել հարկ եղած գումարը այդ կարգի դասագիրքերու հրատարակութեան համար:

Որոշուեցաւ որ Առաջնորդ Սրբազանը կամ Փոխանորդը տեսակցութիւն մը ունենան Տիրացու Յակոբ Ներսոյեանի հետ եւ անոր առջարկեն կիրակօրեայ դպրոցի վարիչ-տնօրէնի պաշտօնը՝ առաւելագոյն 5.000 տուար տարեթոշակով:

Որոշուեցաւ որ կիրակօրեայ դպրոցներու գոյգ կանոնագրութիւններէն բազմագրեալ օրինակներ տրամադրուին Թեմական Խորհուրդի անդամներուն՝ յաջորդ ժողովին նկատի առնելու համար:

Սեպտ. 13, 1956  
Նիստ 10.

-----

- 8. Տ. Վարդան ԹՀՆՅ. Մկրեան՝ կիրակօրեայ դպրոցներու վարիչ յանձնախումբի կանոնագրութեան օրինակները բաժնեց ժողովականներուն, որպէս զի կարդան եւ իրենց տեսակէտները յայտնեն յաջորդ ժողովին:

Հոկտ. 2, 1956  
Նիստ 11.

-----

- 9. Տ. Վարդան ԹՀՆՅ. Մկրեան հաղորդեց թէ Պրն. Յակոբ Ներսոյեան յանձն պիտի առնէ մէկ տարուան ընթացքին պատրաստել /թարգմանաբար կամ իր աշխատասիրութեամբ/ 1-9 դասագիրքեր եւ ուսուցիչներու յատուկ ուղղեցոյցներ եւ աշակերտներու սերտողութեան համար նիւթեր:

Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբը կը յանձնարարէ Պրն. Նուպար Տօրեանը նշանակել վարիչ-տնօրէն կիրակօրեայ դպրոցին, եւ դասագիրքերու պատրաստութեան, վարիչ-տնօրէնի թոշակի եւ գրասենեակի ծախուց համար պիւտճէ կը նախատեսուի 9.000 տուար:

Ժողովը, նկատի ունենալով որ Թեմական Պատգամաւորական Ժողովը 11.000 տուարի պիւտճէ սահմանած է կիրակօրեայ եւ ծխական դպրոցներու համար, որոշեց ընդունիլ Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբի սոյն յանձնարարութիւնները եւ հրահանգել որ յիշեալ 1-9 դասագիրքերը պատրաստուին, վարիչ-տնօրէնը վարձուի եւ գրասենեակի համար կարգադրուի թիւններ ըլլան:

Հոկտ, 30, 1956  
Նիստ Ա.

-----

- 10. Տ. Վարդան ԹՀՆՅ. Մկրեան եւ Տ. Լեւոն ԹՀՆՅ. Առաքելեան Կիրակօրեայ Դպրոցներու Կեդրոնական Խորհուրդի կողմէ հաղորդեցին թէ պատրաստութեան մէջ եղող ընդհանուր ծրագիրը պիտի ներկայացուի Թեմական Խորհուրդին, իսկ վարիչ-տնօրէնի համար դեռ կարելի չէ եղած կարգադրուի թիւն ընել:

Դեկտ. 5, 1956  
Նիստ Բ.

-----

- 11. Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբի քարտուղար Երէցկին եւ զին Մկրեան 1957 Ապրիլ 9 թուակիր նամակով կը տեղեկացնէր, թէ կարելի չէ եղած թեկնածու մը կիրակօրեայ դպրոցի վարիչ-տնօրէնի պաշտօնին համար: Յանձնախումբը որոշած է որ իր անդամներէն երեք հոգի ուսումնա-

սիրուծիւն կատարեն, դասագիրքեր պատրաստեն եւ տեսողութեան /վիժիուել/ յայտագիր կազմեն:

Ուսումնասիրութիւնը պիտի կատարէ նուպար Տօրեան, դասագիրքերը պիտի պատրաստէ Յակոբ Ներսոյեան, տեսողութեան յայտագիրը պիտի կազմէ Երէց-կին Եւզին Մկրեան: Այս երեք պաշտօններուն համար 1957-1958 Մայիսի շրջանին սահմանուած պիւտճէն պիտի ըլլայ 5.000 տոլար՝ հետեւեալ բաժանումով.- Տօրեանի՝ 2.000 տոլար, Ներսոյեանի՝ 2.000 տոլար, եւ Երէցկին Մկրեանի՝ 1.000 տոլար:

Ժողովը ընդունեց սոյն յանձնարարութիւնը եւ որոշեց կիրակօրեայ կրթական ծրագրի գործադրութեան համար յատկացնել 5.000 տոլար մինչեւ Մայիս, 1958:

Ապրիլ 9, 1957  
Նիստ Ե.

-----

- 12. Ժողովը պարտականութիւն յանձնեց Տ. Արտէն ԲՀՆՅ. Աշճեանի եւ Տ. Բարզէն ԲՀՆՅ. Մագսուտեանի որպէս զի քննեն կիրակօրեայ դպրոցի կանոնագիրը եւ տեղեկագիր ներկայացնեն Խորհուրդի յաջորդ նիստին:

Մայիս 2, 1957  
Նիստ Զ.

-----

- 13. Տ. Վարդան ԲՀՆՅ. Մկրեան ըսաւ թէ կիրակօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն մը ունենալու համար Թեմական Պատգամաւորական Ժողովը սահմանած է 4.500 տոլար: Սոյն գումարով /ի հարկին ճանապարհածախը ապահովելով այլ միջոցներով/ կարելի է պաշտօնի կոչել ընծայացու ուսանող Յովհաննէս Արկ. Գասպարեանը:

Այս հարցը մնաց սեղանի վրայ, այն իմաստով որ Արքազան Հայրը թեկնածուին մասին տեղեկութիւններ հաղորդէ յաջորդ ժողովին:

Դեկտ. 23, 1957  
Նիստ Ա.

-----

- 14. Առաջնորդ Արքազանը հաղորդեց թէ Յովհաննէս Արկ. Գասպարեան՝ իբրեւ ուսեալ երիտասարդ մը պիտի կրնայ օգտակար ծառայութիւն մատուցանել մեր թեմի կիրակօրեայ դպրոցին համար եւ ան Յունիսէն յետոյ միայն ազատ պիտի ըլլայ ընդունելու կիրակօրեայ դպրոցներու եւ Հ.Ե.Շ. Կազմակերպութեան տեսուչի պաշտօնը:

Յունվ. 24, 1958  
Նիստ Գ.

-----

- 15. Տ. Վարդան ԲՀՆՅ. Մկրեան, ատենապետը Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբին, Ապրիլ 17 Թուակիր նամակով Խորհուրդի օւշադրութեան կը յանձնէր, թէ Թեմական Խորհուրդը որոշած էր Հոգեւոր Դաստիարակութեան Խորհուրդին /Կիրակօրեայ Դպրոցներու Վարիչ Յանձնախումբին/ տրամադրել 5000 տոլար իբրեւ թոշակ երեք հոգիի Մայիս 1, 1957, մինչեւ Մայիս 1, 1958, դրպրոցներու դասագիրքերու պատրաստութեան, ուսումնասիրութեան եւ տեսողութեան յայտագրի կազմութեան համար: Այդ գումարէն ցարդ վճարուած է 3300 տոլար եւ առկախ կը մնայ 1.700 տոլար: Աշխատանքները Մայիսին կ'ամբողջանային եւ Յանձնախումբը պարտի վճարել թոշակները եւ առ այդ կը խնդրէր փութով Առաջնորդարանէն վճարուէր յիշեալ գումարը:

Տրուած յաւելեալ բացատրութիւնները նաեւ նկատի ունենալով՝ ժողովը որոշեց հրահանգել Հոգեւոր Դաստիարակութեան Խորհուրդին որպէս զի առաջին պատեհութեամբ Առաջնորդարանի տրամադրէ կիրակօրեայ դպրոցներու համար Պրն. Յակոբ Ներսոյեանի պատրաստած դասերէն 4-5 օրինակ, ինչպէս նաեւ Պրն. Նուպար Տօրեանի պատրաստած տեղեկագրէն նոյնքան օրինակ:

Ժողովը որոշեց որ տրուած որոշման համաձայն, վճարուի կիրակօրեայ դասագիրքերու համար սահմանուած գումարին մնացեալ մասը՝ 1.700 տոլար, պայմանաւ որ Հոգեւոր Դաստիարակութեան Խորհուրդը իր բոլոր գործունէութիւնը յետ այսօրիկ տնօրինէ թեմական Խորհուրդի գիտութեամբ եւ Առաջնորդարանին մէջ:

Ապրիլ 18, 1958  
Նիստ 6

-----

Y 16. Առաջնորդ Սրբազանը ժողովիս հաղորդեց թէ յարմար կարգադրութիւն մը ընելով՝ Տ. Միւռն Վրդ. Կրճիկեանը նշանակած էր Առաջնորդական Փոխանորդ, եւ փափաքեցաւ որ թեմական Խորհուրդը սահմանէր անոր թոշակը:

X Այս պարագան նկատի ունենալով՝ ժողովը յարմար գտաւ Հայր Միւռնը հրահարել իբրեւ խմբագիր "Հայաստանեայց Եկեղեցի" պաշտօնաթերթի եւ իբրեւ վարիչ-տնօրէն թեմի կիրակօրեայ դպրոցներու, եւ այս երեք պաշտօններուն համար անոր վճարել շաբաթական 80 տոլար:

Ապրիլ 18, 1956  
Նիստ 6.

-----

17. Տ. Միւռն Վրդ. Կրճիկեան հաղորդեց թէ վերջերս գումարուած կիրակօրեայ դպրոցներու տնօրէններու համագումարը գոհունակութեամբ արձանագրած էր Տիրացու Յակոբ Ներսոյեանի պատրաստած դասերու լիակատար ըլլալը, եւ աւելցուց թէ իր կարծիքով սոյն դասագրքին հրատարակութիւնը պատիւ պիտի բերէ թեմական Խորհուրդին:

Փոխանորդ Հայր Սուրբը նաեւ յայտնեց թէ կիրակօրեայ դպրոցներու կրթական գործին ընթացք տրուած էր անդամներու ջանքերով, սակայն ներկայիս գործադիր քարտուղարի մը պէտքը զգալի նկատելով կը յանձնարարէր որ թեմական Խորհուրդը յարմար անձ մը նշանակէր այդ պաշտօնին եւ նաեւ սահմանէր 1958-1959 դպրոցական շրջանի պիւտճէն, ըստ հետեւեալին.-

Գործադիր քարտուղարի տարեթոշակ	4.200 տոլար
Քարտուղարի ճանապարհածախս	800
12 տարեկաններու յատուկ Հայց. Եկեղեցւոյ պատմութեան դասագիրք մը՝ 35 դասերէ	2.000
Գրասենեակի գործերու եւ այլ պիտոյքներու	800

Գործադիր քարտուղարի պարտականութիւնները պիտի ըլլան՝

- ա. Քննել Հոգեւոր Դաստիարակութեան Կեդրոնական Խորհուրդի յանձնարարութեամբ պատրաստուած ուսումնասիրութիւնները.
- բ. Կատարել բոլոր թղթակցութիւնները.
- գ. Հաստատել կիրակօրեայ նոր դպրոցներ եւ եղածներէն տկարները զօրացնել.
- դ. Հսկել կրթական ջրագրի գործադրութեան.
- ե. Համարել դասագրքերու նիւթերը.

զ. Կազմակերպել տնօրէններու եւ ուսուցիչներու յատուկ համագումարներ.

է. Պատրաստել յաւելուածական գրութիւն մը՝ կիրակօրեայ դպրոցներու վերաբերեալ՝ գետեղելու "Արմինիըն Կարտիըն"ի իւրաքանչիւր ամսեայ համարին մէջ.

ը. Հսկել փոստին յանձնուելիք բոլոր նիւթերուն /զասագիրք եւայլն/:

Ժողովը յարմար նկատեց պարբերաբար սարքել կիրակօրեայ դպրոցներու ուսուցիչներուն համար շրջանային լսարաններ, ուր Յակոբ Սարկաւազներսոյեան կամ ուրիշներ ղասախօսեն պատրաստուած դասերու ականգման եղանակի մասին, որպէս զի կարելի ըլլայ նախ պատրաստել ուսուցիչներ, որ կարենան որոշ ուղղութեամբ ղասաւանդել:

Ժողովը նաեւ յարմար նկատեց գումարել կիրակօրեայ դպրոցներու ուսուցիչներու համար տարեկան Համաժողով, մէկ շաբաթուան տեւողութեամբ՝ Առաջնորդ դարանի ծախսով: Այդ կարգի համաժողովներ կունենան լսարանական եւ ընկերային պահեր, եւ կ'ըլլայ քաջալերութիւն մը ուսուցիչներուն համար:

Ժողովը, ղասագիրքի տպագրութեան մասին նախահաշիւ առնելէն յետոյ, ընթացք պիտի տայ կիրակօրեայ դպրոցներու կրթական գործին համար ներկայացուած պիւտճէին:

Յուլիս 15, 1958  
նիստ 9.



S. Արտէն Քհնյ. Աշճեանի եւ S. Բաբգէն Քհնյ. Մագսուտեանի կողմէ ներկայացուած նպաստաւոր տեղեկագիրները նկատի ունենալով, Թեմական Խորհուրդը իր 1958, Օգոստոս 22ի նիստին մէջ, կ'որոշէ ընթացք տալ Յակոբ Սրկ. Ներսոյեանի պատրաստած 35 դասերու գիրքին հրատարակութեան գործին:



ԾԱՆՕԹ.

Ինչպէս նկատելի է, Թեմական Խորհուրդի ատենագրութեանց մէջ յաճախ խօսք եղած է Հոգեւոր Դաստիարակութեան Խորհուրդի ծրագիր-կանոնագիրի մը պատրաստութեան մասին, սակայն, հակառակ որ տեղ տեղ կ'ըսուի թէ ծրագիր-կանոնագիրէն օրինակներ բաժնուած է ժողովականներուն, երբեք չի յիշուիր թէ Թեմական Խորհուրդը նկատի առած է նման ծրագիր-կանոնագիր մը կամ վաւերացուցած է զայն:

Նաեւ պէտք է յիշել թէ Կիրակօրեայ Դպրոցի տեսուչը Հոգեւոր Դաստիարակութեան Խորհուրդի կողմէ եղած յանձնարարութեամբ չէ նշանակուած Առաջնորդին կողմէ, ինչպէս պիտի ըլլար, Թեմական Խորհուրդի տուած մէկէ աւելի որոշումներուն համաձայն, այլ Թեմական Խորհուրդը, ըստ պատշաճի, վարիչ-տնօրէնը պաշտօնի կոչած է: